V.U.: Ivo De Ro, Agentschap Integratie en Inburgering, Kanselarijstraat 17 1000 Brussel

Vlaanderen
is divers

HY/NL

Բարի գալուստ Ֆլանդրիա

Այս գրքույկում դուք կստանաք Բելգիայում ձեր առաջին հարցերի պատասխանները

AGENTSCHAP
INTEGRATIE &
INBURGERING

Amal

atlas

fedasil
FEDERAAL AGENTSCHAP VOOR DE OPVANG VAN ASIELZOEKERS

Բարի գալուստ Ֆլանդրիա

Դուք վերջերս էք տեղափոխվել Ֆլանդրիայում: Միգուցե ձեզ համար ամեն ինչ նոր է, գուցե որոշ բաներ արդեն գիտեք: “Որտե՞ղ կարող եմ նիդերլանդերեն սովորել Ինչպե՞ս կարող եմ աշխատանք գտնել” Այս գրքույկում դուք կստանաք Բելգիայում ձեր առաջին հարցերի պատասխանները: Տեղեկատվությունները կարող եք գտնել ըստ թեմայի.

Ֆլանդրիայում ձեզ զգալ ինչպես ձեր տանը.
ի՞նչ եք սովորում ինտեգրման ընթացակարգի ժամանակ էջ 5

Սովորել Նիդերլանդերեն
Ինչպե՞ս կարող եք գրանցվել նիդերլանդերեն դասերի համար էջ 6

Ձեր համայնքը
Ինչի՞ համար կարող եք դիմել ձեր համայնքին? էջ 9

Աշխատանք և վերապատրաստում.
ինչպե՞ս կարող եք աշխատանք կամ վերապատրաստում գտնել էջ 10

Երեխաներ
ինչպե՞ս է գործում կրթությունը Բելգիայում: Իսկ ո՞վ կարող է ձեզ օգնել դաստիարակությանը վերաբերյալ հարցերում էջ 12

Ապրել
Ինչպե՞ս կարող եք բնակարան փնտրել էջ 15

Ֆինանսներ.
ինչպե՞ս բացել բանկային հաշիվ: Ի՞նչ անել, ֆինանսական խնդիրներ ունենալու դեպքում էջ 16

Առողջություն և բարեկեցություն
Ի՞նչ պետք է անել հիվանդության դեպքում էջ 18

Փոխադրա միջոց
Կարո՞ղ եք ճանաչել տալ ձեր օտարերկրյա վարորդական իրավունքը էջ 20

Ցանկանում ե՞ք այս գրքույկը կարդալ այլ լեզվով. Այցել եք **welkom.inburgering.be** կայքը.

Ցանկանում ե՞ք ավելին իմանալ այդ թեմաների և Բելգիայի կյանքի մասին:

Ինտեգրման գործակալություններում կարող եք մասնակցել ինտեգրման ընթացակարգին. Ընթացակարգը օգնում է, որպեսզի Դուք Ձեզ ավելի արագ զգաք ինչպես ձեր տանը. Օրինակ դուք անցնում եք դասընթաց Ֆլանդրիայում և Բելգիայում կյանքի մասին և Ձեզ ուղղորդում են Ձեր մայրենի լեզվով կամ մեկ այլ լեզվով որը, որ Դուք լավ տիրապետում եք. Այս գրքույկի 5 էջում Դուք կգտնեք Լրացուցիչ տեղեկություններ.

Ցանկանում ե՞ք իմանալ ավելին

Հանդիպում նշանակեք Ձեզ մոտ գտնվող Գործակալությունում. Գործակալությունները աջակցում են ձեզ Ֆլանդրիայում Ձեր նոր կյանքի սկզբում. Այս գրքույկի 4 էջում Դուք կգտնեք Լրացուցիչ տեղեկություններ.

Լրացուցիչ տեղեկություն Բելգիայի կյանքի մասին՝ **www.fedasilinfo.be**

Լրացուցիչ տեղեկություն ինտեգրման ընթացակարգի մասի՞ն

Amal

Բնակվում է՞ք Գենտում.

Հանդիպում նշանակեք Amal-ում՝
www.amal.gent/contact

atlas

Բնակվում է՞ք Անտվերպենում.

Հանդիպում նշանակեք Atlas-ում՝
www.atlas-antwerpen.be/nl/contact

Bon

Բնակվում է՞ք Բրյուսելում

Հանդիպում նշանակեք Bon-ում:
www.bon.be/contact

AGENTSCHAP
INTEGRATIE &
INBURGERING

Բնակվում է՞ք մեկ այլ վայրում Ֆլանդրիայում.

Հանդիպում նշանակեք bij het Ինտեգրման Գործակալությունում (Agentschap Integratie en Inburgering (AgII))՝
www.integratie-inburgering.be/contactpunten

Ֆլանդրիայում Ձեզ զգալ ինչպես Ձեր տանը

Դուք նորեկ եք Ֆլանդրիայում. **Ինտեգրման ընթացակարգը** Ձեզ կօգնի գտնել Ձեր ուղղին նոր երկրում. Այս կերպ դուք կարող եք ավելի արագ Ձեզ զգալ ինչպես Ձեր տանը.

- Հասարակական կողմնորոշման դասընթացի ժամանակ դուք սովորում եք Բելգիայում ապրելու մասին. Դասերը լինելու են կամ ձեր իսկ մայրենի լեզվով կամ մեկ այլ լեզվով որը, որ Դուք լավ տիրապետում եք.
- Ձեզ հետ միասին փնտրում ենք Ձեզ համապատասխան Նիդերլանդերեն դասընթաց. Դուք նաև խորհուրդներ կստանաք Նիդերլանդերեն պարապելու համար.
- Փնտրում ե՞ք աշխատանք Կամ ցանկանում եք սովորե՞լ Մենք լսում ենք Ձեր հավակնությունները. Դուք գրանցվում եք VDAB-ում և ձեզ աջակցում են աշխատանք կամ վերապատրաստում գտնել. Մասնակցության գործընթացում դուք ծանոթանում եք նոր մարդկանց հետ և մասնակցում եք հասարակական գործունեությունների.

Ձեր ընթացակարգի ժամանակ Ձեզ անհատական կուղղորդեն և կստանաք տեղեկություններ Ձեր մայրենի լեզվով կամ մեկ այլ լեզվով որը, որ Դուք լավ տիրապետում եք. Ընթացակարգի ուղղորդողը Ձեզ ողջ ընթացքում կուղղորդի:

www.inburgering.be

Սովորել Նիդերլանդերեն

Ցանկանում ե՞ք Նիդերլանդերեն սովորել

Նիդերլանդերենը կանոր է, որպեսզի Ձեզ Ֆլանդրիայում զգաք ինչպես Ձեր տանը. Հանդիպում նշանակեք AgII-ում, Amal-ում կամ Atlas-ում. Աշխատակիցը կաշխատի ձեզ հետ՝ որոշելու, թե որ դասընթացն է ձեզ անհրաժեշտ.

Լրացուցիչ տեղեկություն:

Ինչպե՞ս կարող եք Նիդերլանդերեն պարապել

www.ikdoemee.be կայքում դուք կգտնեք գործունեություններ ձեր տարածքում.

Մի քանի Նիդերլանդերեն բառեր

• Ես … եմ	*Ik ben …*
• Ես ապրում եմ …	*Ik woon in …*
• Ես խոսում եմ ….	*Ik spreek ….*
• խնդրում եմ	*Alsjeblieft*
• Շնորհակալություն	*Dank u wel*
• Խնդրեմ	*Graag gedaan*
• Բարի լույս (6-12u)	*Goedemorgen (06.00 tot 12.00u)*
• Բարի օր (12-18u)	*Goedemiddag (12.00 tot 18.00u)*
• Բարի երեկո (18-24u)	*Goedenavond (18.00 tot 24.00u)*
• Ցտեսություն/Հաջողություն	*Tot ziens/ Dag (voor afscheid)*

Գիտեի՞ք, որ Ֆլանդրիայում պետք է կարողանաք Նիդերլանդերեն խոսել՝

- աշխատելու համար (դպրոցում, երկարորյա դպրոցում, կառավարությունում …)?
- սոցիալապես անապահով ընտանիքների համար բնակարան վարձակալելու համա՞ր
- Բելգիայի քաղաքացիություն դիմելու և ստանալու համա՞ր

“Ինտեգրման ընթացակարգը պարտադիր չեր ինձ համար, բայց ես կարծում էի, որ դա կարևոր է. Ես ուզում էի ծանոթանալ Բելգիայի մշակույթին և կանոններին.”

ՌՈԶԱ

“ Ես գրանցվեցի VDAB-ում. Նրանք շուտով ինձ աշխատանք գտան հացի փռում.”

ՌԱՄԱԶԱՆ

Ձեր համայնքը

Քաղաքապետարան

Դուք պետք է գրանցվեք այն քաղաքում կամ համայնքում, որտեղ ապրում եք. Դա անում եք քաղաքապետարանում. Բոլոր համայնքները ունեն իրենց քաղաքապետարանը. Քաղաքապետարանում կարող եք ձեռք բերել պաշտոնական փաստաթղթեր: բնակության փաստաթղթեր, գրանցում քաղաքապետարանում, հասցեի փոփոխություն, ծննդյան վկայական, վարորդական իրավունք …

Ձեր բնակության փաստաթղթերը պետք է լինեն կարգի. Շատ իրավիճակներում Ձեզ անհրաժեշտ է վավեր նույնականացման քարտ (ID). Օրինակ: բնակարան վարձակալելու համար, աշխատելու համար, բժշկի գնալու համար, ինտեգրման ընթացակարգը սկսելու համար …

Քաղաքապետարանում դուք նաև տեղեկատվություն կստանաք ազատ ժամանակի, սպորտի, գրադարանի ... մասին. Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ձեր քաղաքապետարանի կայքը.

Ունե՞ք ֆինանսական կամ այլ մտահոգություններ. Ձեզ անհրաժեշտ է՞ վարչական և սոցիալական ուղղորդում.

Գնացեք ձեր քաղաքապետարանի Սոցիալական տուն (OCMW). Սոցիալական ծառայությունները կքննարկեն ձեզ հետ միասին, թե ինչպես կարող են օգնել ձեզ.

Լրացուցիչ տեղեկություն:

Աշխատանք և վերապատրաստում

Ինչպե՞ս կարող եք աշխատանք գտնել

Դեռ աշխատանք չունե՞ք. VDAB-ն կամ OCMW-ն (եթե դուք ապրուստի նպաստ եք ստանում) կառաջնորդեն ձեզ աշխատանք փնտրելիս. Գրանցվեք որպես աշխատանք փնտրող VDAB-ում. Դա կարելի է անել առցանց կամ VDAB-ում. Ավելի մանրամասն կգտնեք՝ **www.vdab.be/contact**.

0800 30 700

Գրանցվեք առցանց: **www.vdab.be/inschrijven**

Վերցրեք ձեզ հետ բնակության փաստաթղթերը.
Այս փաստաթղթերը ձեզ անհրաժեշտ են Բելգիայում աշխատելու համար:

ՀՈՒՇՈՒՄ՝ | Լրացուցիչ տեղեկություններ ձեր իրավունքների մասին որպես աշխատող

www.fairworkbelgium.be/workers/your-rights/

Ինտեգրման ընթացակարգի ընթացքում Դուք կսովորեք ինչպես փնտրել աշխատանք, ինչպես պատրաստվել աշխատանքի հարցազրույցին և խորհուրդներ կստանաք լավ բնութագիր գրելու համար. Կցանկանայի՞ք աշխատել որպես անհատ ձեռներեց. Թե՞ մտածում եք ի՞նչ իրավունքներ ունեք աշխատանքից ազատվելու դեպքում. Այդ ամենի մասին նույնպես կսովորեք Բելգիայի կյանքի մասին դասերի ընթացքում. (Էջ 5.)

ԻՆՏԵԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Ե՞Ք

Այդ դեպքում պարտավոր եք գրանցվել VDAB-ում երկու ամսվա ընթացքում (եթե դա դեռ չեք արել).

Սովորել

Որպես չափահաս որտե՞ղ կարող եք սովորել Ֆլանդրիայում

- Դուք կարող եք վերապատրաստվել Մեծահասակների կրթության կենտրոնում (CVO).
- Դուք կարող եք վերապատրասվել Ligo-ում, Հիմական կրթության կենտրոն.
- Դուք կարող եք բարձրագույն կրթություն ստանալ de բարձրագույն դպրոցում կամ համալսարանում. Ի՞նչ է ձեզ հարկավոր
  - միջնակարգ կրթության դիպլոմ
  - որոշ համալսարաններ և բարձրագույն դպրոցներ պահանջում են ձեր Նիդերլանդերենի մակարդակի թեստ. Նման թեստի օրինակ է ITNA-ն: **www.itna.be.**

Լրացուցիչ տեղեկություններ՝ **www.volwassenenonderwijs.be**
Առաջարկի ակնարկ: **www.opleidingskompas.be**

Դիպլոմի ճանաչում

Բելգիայից բացի այլ երկրի դիպլոմ ունե՞ք Դուք կարող եք ձեր դիպլոմը ճանաչել Ֆլանդրիայում NARIC-Vlaanderen-ում (National Academic Recognition Information Centre). Ճանաչման ընթացակարգը բարդ է. Մասնակցում եք ինտեգրման ընթացակարգի՞ն AgII, Amal կամ Atlas-ը ուղղորդում են ձեզ ընթացակարգի ժամանակ. Ճանաչված դիպլոմը աշխատանք գտնելու կամ ուսումը շարունակելու ավելի շատ հնարավորություններ է տալիս.

Լրացուցիչ տեղեկություններ՝ **www.naricvlaanderen.be**

Երեխաներ

Երեխա և ընտանիք (Kind en Gezin), որը Մեծանալ գործակալության մասն է կազմում, կօգնի ձեզ հետևյալ հարցերում

- երկարորյա մսալ դպրացում
- դաստիարակություն
- հղիություն և ծննդաբերություն
- …

Լրացուցիչ տեղեկություններ՝ **www.kindengezin.be**
078 150 100

Դպրոց ձեր երեխայի համար

Բելգիայում 5-ից 18 տարեկան բոլոր երեխաները պարտավոր են կրթություն ստանալու . Պարտադիր կրթությունը սկսվում է այն տարվա սեպտեմբերի 1-ից, երբ ձեր երեխան կդառնա 5 տարեկան. Այդ պահից ձեր երեխան պետք է հաճախի դպրոց. Երեխաների մեծ մասը դպրոց է սկսում այցելել 2,5-ից 3 տարեկանում. Դու ինքդ ես ընտրում դպրոցը.

Մանկապարտեզ	Տարրական կրթություն	Միջնակարգ կրթություն	բարձրագույն կրթություն
2,5 մինչև 6 jaar	6 մինչև 12 jaar	12 մինչև 18 jaar	18 տարեկանից

Կրթական համակարգը լիովին բացատրվում է Բելգիայի կյանքի մասին դասընթացում. Ձեր երեխայի համար դպրոց գտնելու հարցում օգնության կարիք ունե՞ք Նշանակեք հանդիպում Ինտեգրման գործակալություններից որևէ մեկում (էջ 4.)

Լրացուցիչ տեղեկություններ՝

Աճի փաթեթ

Ֆլանդրիայում դուք ամեն ամիս ֆինանսական աջակցություն եք ստանում ձեր երեխայի (երեխաների) կրթության համար: Դա աճի փաթեթն է. Գումարը կախված է ձեր անձնական իրավիճակից.

Լրացուցիչ տեղեկություններ՝ **www.groeipakket.be**

“ Տղաս դպրոց է գնում. Այնպես որ, նիդերլանդերեն սովորելը կարևոր է ինձ համար. Այս կերպ ես կարող եմ ավելի լավ խոսել նրա ուսուցիչների հետ և հասկանալ, թե ինչ է նա քննարկում ընկերների հետ.”

ՄԵՐՎԵ

“ Ես ինձ միայնակ էի զգում. Բայց իմ ինտեգրման ընթացակարգի ընթացքում ես հանդիպեցի այլ կանանց. Նրանք դեռ իմ ընկերներն են. Նոր երկրում ձեր ընկերները դառնում են ձեր ընտանիքը.”

ԼԱՈՒՐԱ

Ապրել

Ինչպե՞ս գտնել բնակարան

Ինտեգրման ընթացակարգի (էջ 5) ընթացքում այս մասին տեղեկություն կստանաք het inburgeringstraject՝

- որ կազմակերպությունները կարող են օգնել ձեզ
- վարձակալության պայմանագրեր
- ինչ պետք է անեք, եթե ցանկանում եք տուն գնել
- ինչպես պատրաստվել տուն այցելությանը
- …

Լրացուցիչ տեղեկություններ այն մասին թե ինչպես փնտրել բնակարան և ինչին պետք է ուշադրություն դարձնել՝ **www.fedasilinfo.be/nl/zoektocht-naar-een-woning**

Բնակարանային հասարակություն

Ձեզ համար ֆինանսապես հնարավոր չէ՞ բնակարան կամ տուն վարձակալել Դուք կարող եք սոցիալական բնակարան վարձակալել. Այդ դեպքում դուք ավելի ցածր գին եք վճարում վարձի համար. Սոցիալական բնակարանների համար կան կոնկրետ պայմաններ. Բնակարանային ընկերությունը ստուգում է ձեր կարքավիճակը.

Իրավունք ունե՞ք սոցիալական բնակարան ստանալու Դուք առաջինը կհայտնվեք սպասման ցուցակում.

Լրացուցիչ տեղեկություններ սոցիալական բնակարանների մասին՝

Գտնել բնակարանային հաստատություն Ձեր տարածքում:

ՀՈՒՇՈՒՄ

Դուք ապրում ե՞ք Գենտում. Կապնվեք բնակելի ուղեցույցների հետ՝

Դուք ապրում ե՞ք Անտվերպենում Կապնվեք բնակելի գրասենյակի հետ՝

Ստուգեք՝ արդյոք քաղաքապետարանը, որտեղ դուք ցանկանում եք ապրել, ունի տան կահավորանքի խանութ՝

Ֆինանսներ

Վճարել

Բելգիայում ամենուր կարող եք վճարել կանխիկ կամ բանկային քարտով.

Գիտեի՞ք, որ... բոլորը Ֆլանդրիայում բանկային քարտով հիմական բանկային հաշվի իրավունք ունեն Այսպիսով Դուք կարող եք՝

- էլեկտրոնային վճարումներ խանութներում;
- կանխիկացում և ավանդ Բելգիայում;
- գումար փոխանցել;
- Ձեր հաշվից քաղվածքներ պահանջել.

⚠ Ուշադրություն՝

- Դուք չեք կարող հետաձգված վճարումներ կատարել հիմական բանկային հաշվի միջոցով.
- Դուք չեք կարող գումար վերցնել հիմական բանկային հաշվից.
- Ձեր մասցորդը 0€ է՞ Դուք այլևս չեք կարող վճարումներ կատարել:.

Ցանկանու՞մ եք բանկային հաշիվ բացել Ֆլանդրիայում

Դուք եք ընտրում, թե Ֆլանդրիայի որ բանկում բացեք ձեր առաջին հաշիվը. Դուք ընտրում եք հիմական բանկային հաշիվ կամ սովորական հաշիվ.

Ի՞նչ է անհրաժեշտ բանկային հաշիվ բացելու համար

- ձեր էլեկտրոնային անձը հաստատող փաստաթուղթը կամ բնակության փաստաթուղթը. Դուք պետք է ապացուցեք ձեր ինքնությունը.
- նամակ քաղաքապետարանից՝ ձեր անձը հաստատող փաստաթուղթը կամ բնակության փաստաթուղթը ստանալու համար, կամ տեղեկանք քաղաքապետարանից. Դուք պետք է ապացուցեք ձեր հասցեն.

Ֆինանսական խնդիրներ ունե՞ք

Ֆինանսական աջակցության համար կարող եք դիմել ձեր քաղաքապետարանի Սոցիալական Տուն (OCMW). Դուք կարող եք դիմել կենսապահովման համար, եթե ժամանակավորապես չունեք կամ սահմանափակ եկամուտ ունեք. Այս նպաստը վարձը ամսական դրամական օգնություն է. Նրանք կարող են նաև աջակցել ձեզ, օրինակ, էներգիայի բարձր ծախսերի, դպրոցի ծախսերի և այլ վճարումների հետ կապված...

Ֆինանսական խնդիրներ ունեցող բոլորը կարո՞ղ են ապրուստի նպաստ ստանալ

Ոչ. Դուք պետք է համապատասխանեք կոնկրետ պայմաններին. Դուք դիմում եք ներկայացնում Սոցիալ Տուն կամ OCMW. Նրանք հետաքննում են՝ կարո՞ղ եք ապրելու նպաստ ստանալ:

Լրացուցիչ տեղեկություններ՝ www.vlaanderen.be/leefloon

Առողջություն և բարեկեցություն

Դուք հիվանդ ե՞ք

Գնացեք ձեր ընտանեկան բժշկի մոտ: Ընդհանուր բժիշկը (կամ ընտանեկան բժիշկը)՝

- Ձեր առաջին շփումն է ձեր բժշկական հարցերի համար;
- կառավարում է ձեր բժշկական ֆայլը;
- հետազոտում է ձեզ;
- կարող է ձեզ ուղարկել մասնագետի մոտ.

Գտեք ընտանեկան բժիշկ Ձեր մոտակայքում՝ **www.desocialekaart.be**

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵ՞Ք:

1733 Հանգստյան օրերին կամ պետական տոներին (ոչ շտապ) բժշկական օգնության կարիք ունե՞ք: Զանգահարեք հերթապահ բժիշկ 1733 հեռախոսահամարով.

112 **Ձեզ շտապ բժշկական օգնության կարիք ունե՞ք:** Դուք վթարի եք ենթարկվե՞լ Զանգահարեք 112 անվճար համարին.

ՀՈՒՇՈՒՄ. Ներբեռնեք հավելվածը 112BE
Լրացուցիչ տեղեկություններ՝
www.112.be/nl/mobiele-applicatie

101 Ձեզ միայն ոստիկանությունն է պետք: Զանգահարեք 101 համարին.

Հավելվածի միջոցով կարող եք անմիջապես զանգահարել հրշեջ բրիգադ, շտապօգնություն կամ ոստիկանություն. Ձեր գտնվելու վայրը անմիջապես տեսանելի է շտապ օգնության աշխատակիցներին հավելվածի միջոցով.

Ուշադրություն

Բելգիայում առողջության ապահովագրությունը պարտադիր է. Այդ ապահովագրությունը կարևոր է. Ապահովագրությունը օգնում է ձեզ վճարել բժշկական ծախսերը.

ՀՈՒՇՈՒՄ. HZIV (Հիվանդության և հաշմանդամության ապահովագրության օգնության հիմնադրամ) միջոցով դուք ստանում եք պարտադիր ապահովագրություն առանց հավելյալ ծախսերի.

Լրացուցիչ տեղեկություններ՝

Ո՞րն է տարբերությունը առողջության ապահովագրության և հոսպիտալացման ապահովագրության միջև Իսկ որո՞նք են իմ իրավունքները որպես հիվանդ. Դուք դա սովորում եք ինտեգրման ընթացակարգի ժամանակ (էջ 5.)

Բարեկեցություն

Հոգեբանական օգնության կարիք ունե՞ք

Կապնվեք Ընդհանուր Բարեկեցության Կենտրոնի հետ (CAW).

0800 13 500

www.caw.be

Դուք խտրականության զոհ եք դարցե՞լ

Կապնվեք Unia-ի հետ անվճար հեռախոսահամարով 0800 12 800.

Հարցեր ունե՞ք բռնության և երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ Կապնվեք 1712.

1712

www.1712.be/nl

Շարժունակություն

Հասարակական տրանսպորտ

Ֆլանդրիայում տեղաշարժվելու համար կարող եք օգտվել գնացքից, տրամվայից և ավտոբուսից. Միշտ տոմս գնեք նախքան նստելը. Ձեր տոմսի վավերացումը պարտադիր է. Սկանավորեք ձեր տոմսը ամեն անգամ, երբ նստում եք տրամվայ կամ ավտոբուս: Եթե չունեք վավեր տոմս, կտուգանվեք.

Որտե՞ղ կարող եք տոմս գնել. Տոմսը կարող եք գնել կայարանում գտնվող տոմսարկղից, ավտոմատ դիստրիբյուտորի կամ բջջային հեռախոսի միջոցով. Կարող եք նաև վճարել ձեր բանկային քարտով տրամվայում և ավտոբուսում.

Լրացուցիչ տեղեկություններ ավտոբուսի և տրամվայի մասին.
www.delijn.be

Լրացուցիչ տեղեկություններ գնացքի մասին.
www.nmbs.be

MoBIB քարտը

MoBIB քարտը Բելգիայի բոլոր հասարակական տրանսպորտի բաժանորդագրությունների կամ տոմսերի քարտն է.
Լրացուցիչ տեղեկություններ՝ **www.mobib.be**

“ Ես ոչոկի չէի ճանաչում. Առաջին առաջադրանքս լեզուն սովորելն էր. Ես դա արեցի կամավոր աշխատանք կատարելով, գիրք վերցնելով կամ փոդքասթներ լսելով.”

ՀԱԿԱՆ

Վարորդական իրավունք

Բելգիայում մեքենա վարելու համար դուք պետք է ունենաք վավեր բելգիական կամ միջազգային վարորդական իրավունք. Ունե՞ք վավեր եվրոպական ազգային վարորդական իրավունք: Դուք կարող եք դա օգտագործել Բելգիայում: Ձեզ հարկավոր չէ դա փոխանակել բելգիական վարորդական իրավունքի հետ (քանի դեռ այն վավեր է).

Դուք ունե՞ք վարորդական իրավունք ոչ ԵՄ երկրից Բելգիայում մեքենա վարելու իրավունք ունեք միայն 185 օր. Այնուհետև այդ վարորդական իրավունքով կարող եք դիմել բելգիական վարորդական իրավունքի համար.

⚠ Խնդրում ենք նկատի ունենալ. ոչ բոլոր վարորդական վկայականներն են ձեզ իրավունք տալիս բելգիական վարորդական իրավունք ստանալ. Այստեղ դուք կգտնեք ԵՄ անդամ չհանդիսացող ճանաչված երկրների ցանկը՝

Որտե՞ղ կարող եք դիմել բելգիական վարորդական իրավունքի համար

Բելգիական վարորդական իրավունքի համար կարող եք դիմել քաղաքապետարանում. (էջ 9) Գործընթացը տևում է մի քանի շաբաթ կամ ամիս.

Դեռ չունե՞ք վարորդական իրավունք

Պետք է վարորդական իրավունքի քննություն հանձնեք.

Լրացուցիչ տեղեկություններ՝

Որո՞նք են երթևեկության կանոնները Ինչպե՞ս կարող եմ լավագույնս տեղաշարժվել Կամ ինչպե՞ս պլանավորեմ իմ երթուղին

Այս հարցերի պատասխանները տրվում են ինտեգրման ընթացակարգի դասերի ժամանակ (էջ 5).

“Ես բոլոր նորեկներին խորհուրդ եմ տալիս մասնակցել ինտեգրման ընթացակարգին. Դա ինտեգրվելու լավագույն միջոցն է.”

ՖԱՏՈՒ

Բարի գալուստ Ֆլանդրիա



Դուք գիտեի՞ք ...

Բրյուսելը Բելգիայի մայրաքաղաքն է. Բելգիան ունի 3 շրջան: Ֆլանդրիա, Վալոնիա և Բրյուսել.

Բելգիայում ամենուր վճարում եք եվրոյով.

Բելգիայի պետական լեզուներն են Նիդերլանդերեն, Ֆրանսերեն և Գերմաներեն.

Բելգիան թագավորություն է: Պետության ղեկավարը թագավոր Ֆիլիպն է: Նրա կինը՝ Մաթիլդա թագուհին է.

Բելգիան ժողովրդավարական երկիր է: Բելգիայի բնակիչները կարող են օգնել որոշել քաղաքականության հարցերում.

Բելգիայում կրոնի ազատություն կա: Դուք եք ընտրում՝ հավատո՞ւմ եք թե ոչ: Դուք եք ընտրում ձեր կրոնը.

“ Սկզբում կարոտում ես ընտանիքն ու ընկերները. Այդ իսկ պատճառով ձեզ հարկավոր է ցանց. Ձեզ անհրաժեշտ է մեկը, ում հետ կարող եք խոսել, երբ խնդիրներ ունեք, երբ ուրախ եք կամ տխուր. Ձեզ հարկավոր են ընկերներ.”

ՎՈՆԻ և ԱՆԴՐԵԱ